

Մարդու իրավունքների պաշտպանության օրը՝ ձեռք մեկնեք միմյանց:

Եվրոպական միության Մարդու իրավունքների Հատուկ ներկայացուցիչ
Ստավրոս Լամբրիդիսիսի կողմից:

Մարդու իրավունքների տարեդարձին՝ դեկտեմբերի 10-ին Եվրոպական միությունը ստանում է Խաղաղության Նոբելյան մրցանակը: Անսպասելի զուգադիպություն: ԵՄ-ն պարզևստրվում է ժողովրդավարություն, մարդու իրավունքներ և հաշտություն ջատագովելու և ողջ մայրցամաքում խաղաղություն և կայունություն սփռելու համար: Սա մեր անցյալի ձեռքբերումների մեծագույն ճանաչումն է: Այդ ճանաչումը բոլորիս՝ ԵՄ-ն գերատեսչություններին, ԵՄ անդամ պետություններին և 500 միլիոն քաղաքացիներին պարտավորեցնում է կրկնապատկել ջանքերը մարդու իրավունքները պաշտպանելու և խթանելու ուղղությամբ՝ ինչպես մեր պետությունների սահմաններում, այնպես էլ ամբողջ աշխարհում:

Հիրավի, այս տարվա հուլիսին ԵՄ-ն ընդունեց Մարդու իրավունքների ռազմավարություն և առաջին անգամ նշանակվեց ԵՄ Հատուկ ներկայացուցիչ մարդու իրավունքների հարցերով: Մարդու իրավունքների պաշտպանությունը ԵՄ-ն արտաքին քաղաքականության առանցքային ուղղությունն է՝ առևտրից մինչև բնապահպանություն, հումանիտար օգնություն և անվտանգություն: Անհերքելի փաստ է, որ աշխարհում տեղի ունեցող գրեթե բոլոր մարդկային տառապանքների և հակամարտությունների կարգավորման հիմքում մարդու իրավունքների նկատմամբ հարգանքն է:

Այնուամենայնիվ, մարդու իրավունքների պաշտպանությունը արդյունք կունենա եթե գործենք միասնաբար և կրենք հավասար պատասխանատվություն դրանց խթանման համար: Մարդու իրավունքների զարգացման համար պահանջվում է, որ ԵՄ-ն դաշինքներ կերտի այլ պետությունների, միջազգային կազմակերպությունների, մասնավոր հատվածի և, հատկապես, քաղաքացիական հասարակության հետ: Այսօր ԵՄ-ն սերտորեն համագործակցում է աշխարհի տարբեր գործընկերների՝ ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, Եվրոպայի խորհրդի և Աֆրիկյան միության հետ: Մենք ձգտում ենք լիարժեք համագործակցել աշխարհի հարյուրավոր ՀԿ-ների՝ հետ նրանից խորհրդատվությունն ստանալու ու մարդու իրավունքները նրանց միջոցով խթանելու նպատակով:

Մարդու իրավունքների այս տարվա թեման՝ ներառումն ու մասնակցությունը հասարակական կյանքին առավել քան պատեհ է: Այդ սկզբունքները հասարակության մեջ ներդրնելը այն շարժիչ ուժն է, որը տեղի է ունենում Արաբական աշխարհում: Տարածաշրջանում և դրանից դուրս՝ պետությունների կողմից դեպի ժողովրդավարություն ուղղված քայլերը հույսի խարիսխ են աշխարհի շատ ժողովուրդների համար:

Այս առաջընթացը մեծ աշխատանքի արդյունք է: Նույնիսկ ժողովրդավարացման փուլն արդեն անցած պետություններում ժողովրդավարության կայացման համար, բավարար չէ մեկ ընտրությունների անցկացումը: Ողջունելով հասարակական կյանքի

մասնակցության իրավունքը, ցանկանում ենք արժանին մատուցել բոլոր մարդու իրավապաշտպաններին, որոնք պայքարում են սեփական կարծիքը բարձրաձայնելու, ընտրություններին մասնակցելու և իրենց գրասենյակների գործունեությունն ապահովելու ուղղությամբ: Ցանկանում ենք առանձնացնել նաև, որ քաղաքացիական հասարակության դեր կարևոր է այդ իրավունքը պետությունների սոցիալական համակարգում լիարժեք գործադրելու համար:

Մարդու իրավունքները, ժողովրդավարությունն ու օրենքի գերակայությունը պաշտպանելու համար անհրաժեշտ է ճկուն քաղաքացիական հասարակություն ու կայացած երկխոսություն չԿ-ների և կառավարությունների, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների միջև: Նախորդ շաբաթ տեղի ունեցավ ԵՄ հասարակական կազմակերպությունների 14րդ տարեկան ֆորումը, որի շրջանակներում Բրյուսելում հանդիպեցին 200-ից ավելի նվիրյալ մարդու իրավապաշտպաններ, ակտիվիստներ և քաղաքական գործիչներ: Հայրենիքում նրաք ունեն մեկ ձայն, միավորելով ձայները՝ կազմում են ազատության վերացական երգչխումբ: ԵՄ-ն իր ամբողջ ներուժով աջակցելու է այդ ազատության պահպաններին ամբողջ աշխարհում:

Քանզի, իրավունքների խախտումը հաճախ օրինաչափություն է, այլ ոչ բացառություն: Մի շարք պետություններում քաղաքացին զուրկ է իր ապագային վերաբերյալ կարծիք արտահայտել: Ոմանք, անգամ ենթարկվում են չարչարանքների կամ ազատագրկման սեփական տեսակետը բարձրաձայնելու համար: Եվրոպական խորհրդարանի 2012թ.-ի Սախարովի մրցանակակիր Նասրին Սոտուդեհը լավ գիտի այդ մասին: Վտանգելով կյանքը՝ նա մեծ քաջությամբ պայքարեց իր ընտանիքի իրավունքների սահմանափակման դեմ: Նրա գործողությունները դարձան լուրջ ազդանշան Իրանին և ներշնչանքի աղբյուր ամբողջ աշխարհի իրավապաշտպանների համար:

Մինչդեռ, բազմաթիվ չԿ-ների արտահայտման և հավաքների իրավունքը լրորեն սահմանափակվում է: Այս տակտիկան, հաճախ կեղծ ներկայացվում է, որպես այլ իրավունքների պաշտպանություն, օրինակ՝ որպես ահաբեկչության դեմ պայքար: Հասարակական կազմակերպությունների աշխատակիցներին և մարդու իրավունքների պաշտպանները ենթարկվում են հալածանքների և անօրեն հետապնդումների, կամ նրանց պիտակավորում են «դավաճան» լռեցնելու նպատակով: Հաճախակի են դառնում դեպքերը, երբ դադարեցվում չԿ-ների գործունեության համար անհրաժեշտ ֆինանսավորումը, ինչը անհապաղ շտկման կարիք ունի:

Մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված շարժումները հաջող արդյունք կունենան, եթե յուրաքանչյուր անհատ կրի պատասխանատվության իր բաժինը և պաշտպանի մյուսների իրավունքները: Այս տարի դեկտեմբերի 10-ը համարենք այս համընդհանուր մարտահրավերի նոր սկիզբ: Այսպիսով, մարդու իրավունքների պաշտպանության օրը միավորվենք մեր ջանքերը, որպեսզի ամեն

կին և ամեն տղամարդ իրավունք ունենա մասնակցել իր կյանքի, իր համայնքի և իր հասարակության կյանքի ձևավորման գործընթացում: